ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» հոկտեմբեր 2020 թվականի N 54

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ «ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ՆՈՐ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 9-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2020 թվականի օգոստոսի 24-ի թիվ 71 որոշումը՝ որոշում եմ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի «Շառլ Ազնավուրի անվան մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի նոր կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել «Շառլ Ազնավուրի անվան մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն Խաթուն Հակոբյանին ապահովել սույն որոշմամբ հաստատված կանոնադրությունից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2020 թվական, հոկտեմբերի 27
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» հոկտեմբեր 2020 թվականի N 53

ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 111-Ն որոշումը որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 111-Ն որոշման մեջ կատարել վերաբաշխում՝

1. Վարչական բյուջեի 01 բաժին 6 խումբ 1 դաս հոդված 4657 / Այլ կապիտալ դրամաշնորհներ / պակասեցնել 1000.0 հազար դրամ:

2. Վարչական բյուջեի 01 բաժին 6 խումբ 1 դաս հոդված 4251 /Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում/ ավելացնել 1000.0 հազար դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2020 թվական, հոկտեմբերի 26
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» հոկտեմբերի 2020 թվականի N 52

ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N 111-Ն որոշումը, 2020 թվականի հունվարի 31-ի N 4 որոշումը՝ որոշում եմ.

1. Դրամական օգնություն տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում ծնված երեխաների ծնողներին՝ համաձայն թիվ 1 հավելվածի:
2. Դրամական օգնություն տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում բնակչի մահվան դեպքում ընտանիքի անդամին՝ համաձայն թիվ 2 հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2020 թվական, հոկտեմբերի 26
գ. Մուսալեռ

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ
ԳԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի
N 52 ՈՐՈՇՄԱՆ

ՑՈՒՑԱԿ

Ծնված երեխաների ծնողներին դրամական օգնություն տալու

Հ/Հ	Երեխայի ազգանուն, անուն, հայրանունը	Երեխայի ծննդյան օրը	Գումար ստացողի ազգանուն, անուն, հայրանունը	Գումարի չափը
1	Մալխասյան Գոհար Պողոսի	09.07.2020թ.	Պետրոսյան Աննա Նվերի	30 000
2	Գևորգյան Նարեկ Հարությունի	28.09.2020թ..	Գևորգյան Հարություն Գևորգի	30 000

Աշխատակազմի քարտուղարի ժ/պ Լ.Ալեքսանյան

ՀԱՎԵԼՎԱԾ 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 թ-ՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի
N 52 ՈՐՈՇՄԱՆ

ՑՈՒՑԱԿ

Հարազատին կորցրած ընտանիքին դրամական օգնություն տալու

Հ/Հ	Մահացածի ազգանուն, անուն, հայրանունը	Մահվան ամսաթիվ	Գումար ստացողի ազգանուն, անուն, հայրանունը	Գումարի չափը
1	Ալեքսանյան Սաթենիկ Արսենի	20.09.2020թ.	Պապյան Ռաֆիկ Աղաջանի	50 000
2	Գևորգյան Աստղիկ Խաչիկի	02.082020թ.	Սաֆարյան Անահիտ Մուշեղի	50 000

Աշխատակազմի քարտուղարի ժ/պ Լ. Ալեքսանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» հոկտեմբեր 2020 թվականի N 51

ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ԱՎԵԼԻ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009թ.թիվ 1066-Ն որոշմամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 24.09.2020թ. N01/14/05805-2020 գրությամբ ներկայացված եզրակացությունը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիների սեփականությունը հանդիսացող 1.0874 հա մակերեսով խաղողի այգին փոխադրել ավելի ցածրարժեք հողատեսքի՝ վարելահողի՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի միավորված ստորաբաժանման կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2020 թվական, հոկտեմբերի 9
գ. Մուսալեռ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի N-51 ՈՐՈՇՄԱՆ

ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱԿ						
ՓՈՓՈԽՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ						
Հ/Հ	Հողի սեփականատեր	Հողամասի առկա նպատակային նշանակությունը	Հողամասի մակերեսը	Փոփոխվող հողատեսքի նպատակային նշանակությունը	Հողամասի ծածկագիրը	Հողամասի սեփականության իրավունքի վկայականի համարը
1	Հայկ Մաթևոսի Բախտավորյան	Խաղողի այգի	0.22 հա	Վարելահող	04-069-108-013	238125
2	Հայկ Մաթևոսի Բախտավորյան	Խաղողի այգի	0.08 հա	Վարելահող	04-069-130-044	1538651
3	Հայկ Մաթևոսի Բախտավորյան	Խաղողի այգի	0.21 հա	Վարելահող	04-069-107-014	238126
4	Արևհատ Իսախանի Բախտավորյան	Խաղողի այգի	0.5774 հա	Վարելահող	04-069-103-0125	24082018-04-0059
	Ընդամենը		1.0874 հա			

Աշխատակազմի քարտուղարի ժ/պ Լ.Ալեքսանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» հոկտեմբեր 2020 թվականի N 50

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿՐԿՆԱԿԻ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թ. օգոստոսի 29-ի N 13-Ն հրամանի 82-րդ կետով և հաշվի առնելով ՀՀ Արմավիրի մարզպետի 09.10.2020թ. թիվ 01/10.1/06216-2020 գրությամբ ստացված ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 07.10.2020թ. ՍՊ //28655-2020թ. հանձնարարականը՝ որոշում եմ.

1. Կասեցնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի /ծածկագիր՝ 3.1-5/ և առաջին կարգի մասնագետի /ծածկագիր՝ 3.2-1/ թափուր պաշտոններ անցկացնելու կրկնակի մրցույթները:
2. Աշխատակազմի քարտուղարի ժ/պ-ին /Լուսինե Ալեքսանյան/ սահմանված կարգով ծանուցել դիմող մասնակիցներին և հանձնաժողովի անդամներին կրկնակի մրցույթների կասեցման վերաբերյալ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2020 թվական,հոկտեմբերի 09
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

այաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
ուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
ետ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08» հոկտեմբերի 2020 թվականի N 49

ՇԻՆՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱԿԱՄ ՀԱՏՎԱԾԻ

ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարան է դիմել քաղաքացի Ռայա Անանյայի Զախարյանը / լիազորված անձ՝ Ռուշան Անանայայի Զախարյանին սեփականության իրավունքով պատկանող համայնքի Շառլ-Տիրան Թեքեյան փողոցի վրա գտնվող բազմաբնակարան շենքի թիվ 15 բնակարանում գտնվող ինքնակամ կառուցված բաց պատշգամբի և աստիճանահարթակի օրինականացման խնդրանքով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ին N470-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշումներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ՝ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում՝ որոշում եմ.

1. Օրինական ճանաչել քաղաքացի Ռուշան Անանայայի Զախարյանին պատկանող ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի Շառլ-Տիրան Թեքեյան փողոցի վրա գտնվող բազմաբնակարան շենքի թիվ 15 բնակարանում ինքնակամ կառուցված 13.9 քմ մակերեսով բաց պատշգամբը և 2.0 քմ մակերեսով աստիճանահարթակը:
2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը կազմում է 10100 դրամ /տաս հազար հարյուր / դրամ:
3. Սույն որոշման ընդունման օրվանից 60 օրվա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
4. ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում գտնվող Շառլ-Տիրան Թեքեյան փողոցի, թիվ 15 հասցեն վերանվանել՝ Արցախի փողոց, թիվ 2/1:

Սույն որոշումից ծագող իրավունքներն ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. Հովհաննիսյան

2020 թվական, հոկտեմբեր 8

գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շաղ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» հոկտեմբերի 2020 թվականի N 48

ՀԱՍՑԵ-ՀԱՄԱՐԱՆԻՇԸ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Մուսալեռ համայնքի ավագանու 2020թ. օգոստոսի 24-ի արտահերթ նիստի N 70 որոշումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում գտնվող Մ.Բաղրամյան նրբանցք թիվ 4 հասցեն վերանվանել Մարշալ Բաղրամյան նրբանցք թիվ 4:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2020 թվական, հոկտեմբերի 07
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շաուլ-Տիրան Թեքեյան 2/1
էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«02» հոկտեմբերի 2020 թվականի N 47/1

ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N 111-Ն որոշումը և 27.09.2020թ. ՀՀ կառավարության թիվ 1586-Ն որոշումը՝ որոշում եմ.

1. ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի «Շաուլ Ազնավուրի անվան մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում ապաստանած Արցախի Հանրապետության մի խումբ բնակիչների կենցաղային կարիքները բարելավելու համար լվացքի մեքենա և արդուկ ձեռք բերելու նպատակով տրամադրել 151000 (մեկ հարյուր հիսունմեկ հազար) դրամ գումար:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2020 թվական, հոկտեմբերի 2
գ. Մուսալեռ